

## ԿԱՐԾԻՔ

### ՎԱՀԵ ՀԱԿՈՒԲԻ ՀԱԿՈՒԲՅԱՆԻ

ԻԲՐԱՀԻՄ ԱԼ-ՀԱԼԱԲԻԻ «MULTAQA AL-ABHUR» («ԾՈՎԵՐԻ ՄԻԱԶՈՒԼՈՒՄ») ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԱՖԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ Է.00.05 «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իսլամական իրավունքի՝ *ֆիկհի* ուսումնասիրումը Արևելքի մասին գիտության կարևորագույն ուղղություններից մեկն է: Այս բնագավառում կատարված հետազոտությունները անխուսափելիորեն միջգիտակարգային բնույթ ունեն, քանի որ ինքը՝ ուսումնասիրության առարկան գտնվում է մի կողմից կրոնի և իրավագիտության, մյուս կողմից՝ հասարակական-քաղաքական դաշտում: Այս առումով խնդրո առարկա ատենախոսության թեման հավասարապես առնչվում է ինչպես իսլամագիտությանն ու իրավագիտությանը, այնպես էլ պատմագիտության ու աղբյուրագիտությանը: Այն բացառիկ նշանակություն ունի խորապես հասկանալու համար Օսմանյան կայսրության ներքին կյանքը ավելի քան երեք հարյուր տարվա (XVI-XIX դարեր) ընթացքում, այդ տերության մեջ ընդունված իրավական նորմերը, դրանց կարգավորումը և հասարակական հարաբերությունների ողջ համակարգը: Այլ կերպ ասած, Իբրահիմ ալ-Հալաբիի և նրա երկերը հավասարապես վերաբերում են թե արաբագիտությանը և թե թուրքագիտությանը: Իբրահիմ ալ-Հալաբիի “Multaqa al-Abhur” (թուրք. կարճ՝ *Մյուլթեքա*) աշխատության ժամանակին ունեցած վիթխարի նշանակությունը լավագույնս երևում է եվրոպացիների մեջ տարածված մի

ասացվածքից, ըստ որի՝ «Սուլթանը իշխում է թուրքերի վրա, մինչդեռ Ղուրանն ու Մյուլթեքան իշխում են սուլթանի վրա»:

*Ֆիկհը* իսլամի հենց առաջին դարերից զարգացվել է տարբեր կրոնաիրավական դպրոցների՝ *մազհաբների* միջոցով, որոնք գտնվելով միմյանց միջև մշտական մրցակցության, ինքնահաստատման, բայց նաև փոխհարստացման գործընթացում՝ դարերի ընթացքում կատարելագործվել ու բյուրեղացել են՝ հասնելով մինչև մեր օրերը: Այն հանգամանքը, որ պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է հենց այս բնագավառին, արդեն իսկ ողջունելի է, թեման անկասկած արդիական է և ունի ինչպես գիտական, այնպես էլ ուսումնակրթական ու գործնական նշանակություն: Վերջին հանգամանքը նշում ենք հաշվի առնելով, որ ներկա աշխարհում ևս մուսուլմանների շուրջ 30 տոկոսը, հետևում է հանաֆիական *մազհաբին*: Բնականաբար այդ տոկոսը շատ ավելի մեծ կլինի եթե նկատի առնենք միայն սուննի մուսուլմաններին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից և բառացանկից:

Ներածության մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև գիտական նորույթը: Այստեղ ատենախոսը անդրադարձել է նաև աշխատանքի ժամանակագրական շրջանակներին ու մեթոդաբանական հիմքին, ընդգրկելով իր օգտագործած աղբյուրներն ու մասնագիտական բազմալեզու (հատկապես՝ արաբերեն, անգլերեն և ռուսերեն) գրականությունը:

Առաջին գլխում ներկայացված են սուննիական կրոնաիրավական դպրոցների՝ Մալիքիական, Շաֆիիական և Հանբալիական *մազհաբների*՝ ձևավորումը և այդ ենթատեքստում Հանաֆիական դպրոցը, հիմնադրի՝ Աբու Հանիֆայի (699-767) դերը այդ *մազհաբի* ձևավորման և կայացման գործում: Ատենախոսին հաջողվել է համոզիչ

կերպով ցույց տալ Հանաֆիական դպրոցի յուրահատկություններն ու առանձնահատկությունները այլ *մազհաբների* հետ համեմատական քննությամբ: Կարևոր է, որ ստենախոսը *մազհաբի* հիմնադիր Աբու Հանիֆայի ներդրումը ներկայացնելուց հետո անդրադառնում է նաև այն տեսաբաններին, որոնք ստեղծագործաբար զարգացնելով հանաֆիական կրոնաիրավական դպրոցը՝ այն հասցրին մինչև XV դարի վերջը, մինչև Իբրահիմ ալ-Հալաբի: Հատկապես հանգամանալից կերպով ներկայացված են երկու հանգուցային դեմքեր՝ Աբու Յուսուֆը (մահ. 798 թ.) և Մուհամմադ ալ-Շայբանին (մահ. 804 թ.), որոնք անմիջական շարունակողներն են Աբու Հանիֆայի գործի:

Ստենախոսության թեմայի բացահայտման տեսակետից կարևոր է երկրորդ գլուխը, որ վերնագրված է «Իբրահիմ ալ-Հալաբիի “Multaqa al-Abhur” աշխատության նշանակությունն ու ազդեցությունը հանաֆիական դպրոցի զարգացման հարցում»:

Ապրելով և ստեղծագործելով XV-XVI դարերի սահմանագլխին Իբրահիմ ալ-Հալաբին ներկայանում է ոչ միայն որպես իսլամի պատմության մեծագույն իրավագետներից մեկը, այլև իր գործերով ու հենց իր ապրած կյանքով նշանավորում է, պայմանական ձևակերպումով, արաբական դասական շրջանի մայրամուտն ու օսմանյան ամենափառավոր շրջանի արշալույսը: Նա կամուրջ է հանդիսանում վերոհիշյալ երկու հսկա պատմափուլերի միջև, միաժամանակ խորհրդանշելով մուսուլմանական իրավունքի շարունակականությունը VIII դարից մինչև XVI դար: Այս գլխում ստենախոսը ցույց է տալիս *մազհաբի* զարգացման ընթացքն ու նրա տեսաբանների ներդրումը դարերի ընթացքում ընդհուպ մինչև XV դար և Իբրահիմ ալ-Հալաբիի հանդես գալն ու նրա գլխավոր՝ «Multaqa al-Abhur» աշխատության նշանակությունը ոչ միայն որպես տեսական ներդրում Հանաֆիական կրոնաիրավական դպրոցի զարգացման մեջ, այլև որպես գործնական, կիրառելի մի օրենսգիրք, որը շուրջ երեք հարյուր տարի հաջողությամբ գործածվել է հսկա

կայսրության ամենօրյա կյանքում, ընդհուպ մինչև 1877 թվականը, և անգամ դրանից հետո հիմք ծառայել նորաստեղծ քաղաքացիական օրենսգրքի համար:

Երկրորդ գլխի և ողջ ատենախոսության կարևոր արժանիքներից են մի շարք հանգուցային հասկացություններին տրված բացատրությունները, որոնք բանալի նշանակություն ունեն ինչպես ընդհանուր առմամբ իսլամական իրավագիտությունը հասկանալու, այնպես էլ Հանաֆիական դպրոցի յուրահատկությունները սահմանելու տեսակետից: Դրանցից են հալալ (թույլատրելի), հարամ (արգելված), ֆարդ (պարտադիր), մանդուբ (ցանկալի), ջաիզ (հանդուրժելի), մաքրուհ (անվայել), մահդուր (արգելված), իջմա (նույնանման դիրքորոշում), կիյաս (համանմանության մեթոդով կայացված որոշում), ուրֆ (սովորույթ), իսթիհասան (գերադասելի նախընտրություն), իսթիսախ (որոշում, որ բխում է մուսուլմանական համայնքի շահերից), իթիքաֆ (մզկիթում մեկուսի մնալու ծիսակարգ) և մի շարք այլ կարևոր բառեր, սկզբունքներ ու հասկացություններ: Ընդ որում, այլ *մազհաբների* նկատմամբ հանաֆիականի տարբերությունը հատկապես երևան է գալիս, երբ ներկայացվում են *ֆակիհների* բացատրություններն ու մեկնությունները վերջին երկու հասկացությունների՝ իսթիհասանի և իթիքաֆի վերաբերյալ: Սույն գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված է Իբրահիմ ալ-Հալաբիի կյանքը, գործունեությունը և բոլոր հիմնական երկերը, որոնք թվով վեցն են և վերաբերում են ինչպես զուտ իրավագիտական հարցերի, այնպես էլ ծիսական խնդիրների և նշանավոր ֆակիհների կենսագրություններին: Իսկ վերջին ենթագլուխն ամբողջովին նվիրված է ալ-Հալաբիի գլխավոր երկին և նրա քննական վերլուծությանը:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է «Իբրահիմ ալ-Հալաբիի “Multaqā al-Abhur” աշխատության երկու ձեռագրերի ուսումնասիրությանն ու համեմատությանը: Դրանք են Երևանի Մաշտոցյան Մատենադարանի թիվ 1713 ձեռագիրը և Ռիադի «Մալիք Սաուդ» համալսարանում պահվող ձեռագրերից թիվ 6770-ը: Այս գլուխը ատենախոսության թերևս ամենաինքնուրույն մասն է, որտեղ

ատենախոսը ցուցաբերել է լեզվական ակնհայտ ունակություններ՝ ոչ միայն թարգմանելով բավական բարդ տեքստերը, այլև կատարելով համեմատական քննություն: Մույն աշխատանքը մեծապես գնահատելի է նաև որպես Երևանի Մաշտոցյան Մատենադարանում պահվող արաբերեն ձեռագրերի արժևորման, գիտական գրականության մեջ շրջանառման ու հանրահռչակման հաջողված փորձ:

Վ.Հակոբյանի ատենախոսության վերաբերյալ իմ լիովին դրական կարծիքի հետ մեկտեղ ներկայացնում եմ նաև մի քանի դիտողություններ:

- Առաջին դիտողությունը վերաբերում է նրան, որ ոչ ներածության մեջ և ոչ էլ հետագա շարադրանքում ներկայացված չեն «Multaqā al-Abhur» աշխատության աշխարհում պահվող ձեռագրերը՝ թեկուզ և ընդհանուր մի ակնարկով: Արժեք օրինակ ներածության մեջ ներկայացնել ընդհանուր պատկերը (թիվը, ըստ երկրների ու կենտրոնների բաշխվածությունը, առավել ամբողջական ու լավ պահպանված օրինակները և այլն) և հետո միայն կոնկրետանալ այդ երկու ձեռագրերի վրա: Հեղինակը բավարարվում է նրանով, որ 89-րդ էջում նշում է. «աշխարհում պահվում են տարբեր ժամանակներում գրված աշխատության ձեռագիր բազմաթիվ տարբերակներ»: Մեր կարծիքով սա բավարար չէ:
- Ռիադի և Երևանի պահոցների համապատասխան ձեռագրերի մասին խոսելիս ատենախոսը բացատրում է թե մատենադարանյան յոթ ձեռագրերից ինչու է ընտրել հատկապես թիվ 1713-ը, բայց որևէ բացատրություն չկա թե Ռիադի «Իբն Սաուդ» համալսարանի 12 ձեռագրերից ինչ սկզբունքով է ընտրվել հենց թիվ 6770-ը:
- Մեր կարծիքով կարելի էր առավել մեծ ուշադրություն դարձնել «Multaqā al-Abhur» աշխատության թարգմանություններին թե արևելյան թե եվրոպական լեզուների և ինչպես բնագրի, այնպես էլ

թարգմանությունների հրատարակություններին: Օրինակ հայտնի է, որ դեռևս XVII դարում այս աշխատությունը թարգմանվել է օսմաներենի և հետագայում հրատարակվել (1838, 1852, 1968 թթ., թուրքերեն լատինատառ՝ 1980, 2011 թթ. և այլն): Ֆրանսերեն թարգմանությունների վերաբերյալ հիշատակությունը ևս ամբողջական չէ, քանի որ թեև հիշվում է 1882-ի Անրի Սովերի թարգմանությունը, բայց չի նշվում, որ դրանից մոտ 80 տարի առաջ նման մի փորձ կատարել էր հայազգի դիվանագետ և արևելագետ Մուրաջա ԴՕհսունը (Թոսունյան՝ 1740-1807):

Մրանք են առավել էական դիտողությունները, որոնք կցանկանայի ներկայացնել: Միաժամանակ, փորձեմ թվարկել նկատածս պակաս կարևոր, բայց ոչ արհամարհելի թերությունները, որոնք վերաբերում են ոչ պատշաճ հղումներին, օտար անունների ոչ ճիշտ տառադարձումներին, ոճական անհարթություններին, միևնույն հասուկ անվան մեկից ավելի ձևերի գործածությանը:

Թվեմ դրանցից մի քանիսը.

- Ատենախոսության 4-րդ և 86-րդ էջերում հիշատակվում է ֆրանսիացի արևելագետ, խնդրո առարկա աշխատության թարգմանիչ Սովերը, որի անունը բնականաբար Անրի է և ոչ թե Հենրի:
- 8-րդ և 81-րդ էջերում հավանաբար ազգությամբ թուրք Սալիմ (կամ Սելիմ) Հաս հետազոտողի անունը նշվում է Սուքրու, որն անկասկած Շյուքրյու է (տեքստում երկու ձևն էլ կա):
- Էջ 8-ում նշանավոր արևելագետ Սյուկիայենի ազգանվան վերջին ն-ն անհետացել է:
- Էջ 9-ում հիշատակվում են չորս հեղինակներ ու նրանց գրքերը, բայց տվյալ էջի վրա ոչ մի հղում չկա:
- Էջ 11-ում հիշատակվում է չէխ հայտնի արևելագետի անունը որպես Գակեկ, մինչդեռ դա Ադամ Գացեկն է:

- Էջ 35-ում կա մի այսպիսի նախադասություն «Միջնադարում Պարսկաստանում և Հյուսիսային Ասիայում, մալիքիականները գրեթե դեր չեն խաղացել»: Ես կառաջարկեի «Հյուսիսային Ասիա» անորոշ ձևակերպման փոխարեն ավելի հստակ աշխարհագրական անուններ օգտագործել:
- Իբրահիմ ալ-Հալաբին ապրել է բավական երկար, շուրջ 88-89 տարի, որի առաջին կեսն ընթացել է XV դարում, երկրորդ կեսը՝ XVI-ում, ուստի այս անձին հիշատակելիս ճիշտ կլինի նշել որպես XV-XVI դարերի հեղինակ, մինչդեռ ատենախոսության մեջ մերթ XV դարն է հիշվում, մերթ՝ XVI-ը:
- 37-րդ էջում երկու տող հեռավորությամբ մի դեպքում գրված է ալ-Շաֆի, մի այլ դեպքում առ-Ռաբի: Այստեղ և այլ էջերում կա միօրինակության խնդիր, ընդ որում ինչպես գիտենք ցանկալի է գիտական աշխատանքներում որոշյալ հոդը՝ ալիֆ-լամբ անփոփոխ թողնել բոլոր դեպքերում, նույնիսկ եթե հաջորդում է արևային տառ:
- Միօրինակության հարց կա նաև խալիֆ թե խալիֆա: Պետք է ընտրել սրանցից որևէ մեկը:
- Ցանկալի է նաև Պարսկաստան բառի փոխարեն գործածել Իրանը:
- Կան սխալներ, որոնք ենթադրում ենք, որ առաջացել են անգլիալեզու գրականության ազդեցությամբ, օրինակ Իբն Թայմիյյահ (էջ 61), պետք է լինի Իբն Թայմիյյա, կամ նույն էջում Կուդամահ, պետք է լինի Կուդամա:
- Իթիքաֆ բառի առաջին Ի-ն կառաջարկեի ապաթարցով գրել, որպեսզի շատ չաղավաղվի և հասկացվի, որ բնագրում երկրորդը «Այն» տառն է:
- Անհաջող շարադրված նախադասության երկու օրինակ. «Դա ևս մեկ անգամ ապացուցում է, որ օսմանները լուրջ էին վերաբերվել սուննի-հանաֆիական հատկությունների պահպանմանը» (էջ 95), կամ «Այսպիսով եթե հիշատակվեն երկու ձեռագրերի միջև առկա տարբերությունները, ապա կտեսնենք, որ դրանք շատ չեն, ինչն արդյունք է ձեռագրերի գրիչների տարբերության» (էջ 103):

- Էջ 118-ում նշվում է «Ձեռագրերի միջև առկա են հետևյալ կառուցվածքային նմանությունները», մինչդեռ թվարկվում են ոչ թե կառուցվածքային, այլ ձևակերպման հետ կապված երևույթներ:

Նշված դիտողությունները էականորեն չեն ազդում ատենախոսության արժանիքների վրա: Դրանք ատենախոսին օգտակար կլինեն հետագա ուսումնասիրություններում և հենց այս ուսումնասիրության որպես մենագրություն հրատարակման պարագայում:

Վահե Հակոբյանը կատարել է ուշագրավ և հայաստանյան իրականության մեջ ինչ որ առումով եզակի մի աշխատանք, որտեղ նկատելի են փորձառու դեկավարի խորհուրդները:

Ատենախոսությունը հիմնականում շարադրված է գրագետ հայերենով: Հեղինակը ցուցաբերել է արաբերեն բնագրի լեզվի տիրապետման և թարգմանության ակնհայտ ունակություններ, ինչպես նաև մասնագիտական մեծածավալ գրականությունից օգտվելու հմտություն: Կարելի է նշել, որ արաբերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով առկա հիմնական գիտական գրականությունը ընդգրկված է ատենախոսության մեջ:

Ատենախոսության թեման շատ սերտորեն առնչվում է հաղիսների ու հաղիսագիտության հետ: Այս առումով տեղին է նշել, որ Մատենադարանի արաբական հավաքածուի մեջ բավական մեծ թիվ են կազմում հաղիսների ժողովածուները, որոնք ևս սպասում են իրենց հետազոտողին:

Ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները, հանգել ենք հետևյալ եզրակացության.

Վահե Հակոբի Հակոբյանի «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Abhur» («Ծովերի միաձուլում») աշխատության ազդեցությունը Հանաֆիական կրոնաիրավական դպրոցի զարգացման պատմության վրա. Ձեռագրերի համեմատական վերլուծություն»



վերնագրով Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»-ին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ. գ. դ.  
Վահան Արամի Տեր-Ղևոնդյան

06.12.2024

պ.գ.դ. Վ. Ա. Տեր-Ղևոնդյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի գիտական գծով  
տեղակալ, պ.գ.թ. Վահե Թորոսյան

